



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

2007-08 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ, ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԸ \$ 535,000 ՏՈՒԱՐԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Սրտի անհուն գոհունակությամբ եւ երախտագիտական զգացումներով այսու կը հաղորդենք մեր ժողովուրդին, որ Թեմիս Ազգային վարժարաններուն զօրավիգ կանգնելու տարիներու իր բարի աւանդութեան համաձայն, ԼԻՆՍԻ Հիմնարկը ուսումնական 2007-2008 տարեշրջանին համար կատարեց իշխանական նուիրատուութիւն մը, որուն ընդհանուր գումարն է 535,000.00 տոլար:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական ժողովը, Ազգային Վարչութիւնը, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինն ու յարակից միաւորները խորին շնորհակալութիւն կը յայտնեն ԼԻՆՍԻ Հիմնարկին ու անոր ճամբով՝ Հայ ժողովուրդին ու հայրենիքին ծառայող պատասխանատուներուն:

ԼԻՆՍԻ Հիմնարկին հետեւողական օժանդակութիւնները կենսական դեր ունին մեր գաղութի կրթական եւ ազգային հաստատութեանց կարիքներուն հոգացման մէջ: Այս աջակցութեան ճամբով, մեր վարժարանները կարելիութիւնը կ'ունենան աւելի հեզասահ կերպով կենսագործելու նոր սերունդներու հայակերտումի ու հոգեմտաւոր կարիքներուն գոհացումը:

Թող բարձրեալն Աստուած բազմապատիկ վարձահատոյց ըլլայ ԼԻՆՍԻ Հիմնարկի բարերարին ու պատասխանատուներուն, օրինէ անոնց վաստակը եւ իր հովանին տարածէ անոնց բարեսիրական ու մարդասիրական աշխատանքներուն վրայ:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

8 Նոյեմբեր 2007

COMMUNIQUE

**THE LINCY FOUNDATION ALLOCATES
\$ 535,000 TO PRELACY SCHOOLS**

With heartfelt gratitude we are pleased to announce that The Lincy Foundation has once again made a generous donation in the amount of \$535,000.00 to Prelacy Armenian schools for the 2007-2008 academic year.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Prelacy Religious and Executive Councils, the Board of Regents of Prelacy Schools, and committees serving under their auspices, convey their sincerest thanks to The Lincy Foundation and to its administrators for their dedicated services to our people.

The Lincy Foundation has, for many years, been providing for the needs of our educational and cultural organizations. Through their generous grants, our schools have been able to carry out their mission of providing the highest standard of education to subsequent generations.

May Almighty God reward the founder and administration of The Lincy Foundation and bless their charitable and humanitarian endeavors.

DIVAN WESTERN PRELACY

November 8, 2007